



ՀԻՉՈՐՈՒՄԻ ՄԵՅՈՒՆ

Ըաղաքային «Կոմսոլի» օրաթերթի հավելված

1991 թ. Ապրիլ: № 23: Գինը՝ 50 կոպ.



Փրկարարները...

Լուսանկարը - Ս. Գուլյանի

ՈՒՐԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՆԵՑԻՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Մտավորապես 200 արևմտագերմանացի մասնագետներ մի ամբողջ ամիս ակտիվորեն մասնակցում էին տարիքային աղետից տուժած շրջաններում փրկարար աշխատանքներին. իսկ հետո փրատակների մաքրմանը: Ավարտելով իրենց աշխատանքը Հայաստանում, նրանք որոշեցին Լեհիստանի շինարարներին հանձնել ամբողջ տեխնիկան՝ ավտոմեքենաները, կենտրոնները, բուլդոզերները, էլեկտրական հոսանքի գեներատորները, ինչպես նաև օժանդակ գործիքները:

— Երբ աշխարհում որևէ սեղ ծանր աղետ է պատահում և մարդիկ հայտնվում են դժբախտության մեջ, մեր հասարակական կազմակերպությունը, որը կոչվում է «Տեխնիկական օգնություն» և միավորում է կամավոր ԼՍՊՊՊ-ականների, միշտ էլ օգնության է շուտապես նրանց. — Արմենյանի թղթակցին սաաց այդ կազմակերպության ներկայացուցիչ Հերման Բյալը: — Այժմ, ինչ պատահեց Հայաստանի որոշ շրջաններում, բառացիորեն ցնցեց մեր նրկրի հասարակայնությանը: Ուրախ ենք, որ օգնեցինք Հայաստանի ժողովրդին:

Բյալը տատմում է, որ նոր տարվա նախօրին մի քանի

օրով մեկնել էր հայրենիք: Այնտեղ նրան դիմել էին մի պատանի ու մի աղջիկ, խընդրելով իրենցից ընդունել 1800 մարկ՝ այն վճարովի երեկոյթի ամբողջ դրամամուտը, որ նրանք կազմակերպել էին իրենց ընկերների միջավայրում երեխաներին օգնություն ցույց տալու համար:

«Տեխնիկական օգնություն» իսկի ԳՖՀ-ն Հայաստանում ներկայացված էր նաև Կարմիր խաչի ընկերությունը, ինչպես նաև Լյուդո-հանգա ավիացիոնային աշխատակիցներով, որոնք «Զվարթնոց» օդանավակայանում օգնում են քեռնաբաժնու

լու փոխադրական ինքնաթիռները:

Մեր փրկարարները փրատակներից դուրս են քերել երկու երեխա, — սառած է Հ. Բյալը: — Թվարանորեն դա մեծ թիվ չէ. բայց չէ որ դրանք մարդիկ են ու պահպանվել է ամենաթանկարժեքը՝ կյանքը: Համուժ միայն այդ բանի արժեք, որ մենք բոլորս քառի ու քրտինքի մեջ աշխատեցինք: Իսկ երբ մեր օգնությունը ուշանում էր, մեր կողմնակից յուրաքանչյուր՝ անդամ, իսկ այստեղ ընդհանուր առմամբ աշխատում էին ԳՖՀ-ի մոտ 200 մասնագետներ, ցավագին ապրումներ էր ունենում:

Հերման Բյալը գտնում է, որ ինքը որպես մասնագետ, կարող է օգնել Հայաստանում կազմակերպելու փրկարարների շուկա, նրան հաղորդելու իր հարուստ փորձը և տեխնիկական հագեցնելու սպե:

Վերջում Հերման Բյալը սաաց, որ գերմանացի մասնագետները որսածիտ են տալիս հյուրընկալ Հայաստանին, որտեղ շատ մարդկանց հետ բարեկամացան, և հույս ունենորից զայ պատեղ հայ ժողովրդին օգնելու տարերքի ավերած ընակավայրերի վերականգնման գործում:

(Արմենյանի թղթ.)



ԳԱԼԻՆԱ ՄԻՒՍԱՅԻՈՎՆԱ
ԽՈՒՆՈՎԱ
(դասախոսի հիշատակին)

Ինկտեմբերյան աղետին զոհ գնաց նաև Լենինականի մանկավարժական ինստիտուտի ուսաց և արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Խոյուղովա Գալինա Միխայլովնան իր կրտսեր որդու՝ Վենիկոյի Յուրիի Սոխրյակովի հետ:

Ծնվել է Գալինա Խոյուղովան 1948 թ. Վորոնեժում: 1989 թ. Լոռուում ամուսնանալուց հետո աշխատանքի է անցել Լենինականի մանկավարժական ինստիտուտում, որտեղ 20 տարի հայ ուսանողներին դասավանդել է 18-րդ դարի ռուս գրականությունը և առարկան: 1975 թ. Գալինա Միխայլովնան փայլուն պաշտպանել է թեկնածուական դիսերտացիան: Բազմաթիվ գիտական աշխատանքների հեղինակ է: Մոսկվայում, Լենինգրադում և այլ քաղաքներում կայացած գիտական կոնֆերանսների մշտական մասնակից: Նա իր գիտելիքները անմնացորդ անվիրումով փոխանցում էր ուսանողներին: Նրա դասախոսությունները աչքի էին ընկնում գիտական խորությամբ, կեն




դանի և էմոցիոնալ բնույթով: Նա փայլուն մասնագետ էր, պայծառ անհատականություն, ազնիվ ու պարտաճանաչ անձնավորություն: Գալինան նաև մկրված կին էր, սիրող մայր: Նրան սիրում ու հարգում էին ոչ միայն գործընկերները, այլև բոլոր ուսանողները: Սիրելի դասախոսի, գեղեցիկ և հմայիչ կնոջ հիշատակը միշտ վատ կմնա նրանց սրտերում, ում բախտ է վիճակվել լինելու Գալինա Միխայլովնայի ուսանողը կամ գործընկերը:

ՎԱՆԿՈՒՂ ԶՈՒՐԵՎԻՉ
ՍՈՒՐՅԱԿՈՎ

Փոքրիկ Վանիկոյը ծնվել է 1978 թ. Լարիսկ քաղաքում: Ընդամենը 10 տարեկան էր, քայք գերազանց տիրապետում էր անգլերեն լեզվին, ուներ նրաժշտական փայլուն տվյալներ: Սովորում էր N 14 դպրոցում: Երկու դըպրոցներում էլ գերազանցիկ էր: Վանիկոյը դպրոցական թերթի խմբագիրն էր, ջոկատի խորհրդի նախագահը: Ուսուցիչներն ու ծնողները նրա հետ շատ մեծ հույսեր էին կապում, ավագ, ամեն ինչ վաղ բնորոշումով: Համեմատ այս փոքրիկի, քաղաքը կորցրեց սպազա մի լավ երաժշտի ու լեզվաբանի...

ԳԱՅԱՆԵ ԳԱՐՈՅԱՆ



ՀՈՒՎԱՆՆԵՍ ՀԱՅԿԻ
ՀԱՎՈՐՅԱՆ

Ծնվել է 1943 թ. Լենինականում: Նա աշխատել է ճաշարանների տրեստում: Մասնակցություն կից զբվելով հորից, ճաշակեց որրության դառնությունը: Ասես չար ճակատագիրը ըստ վերի նման հետևում էր նրան ու քիչ համարելով Հովհաննեսի տեսածն ու սպրածը, նույն քախտից բաժին հանեց նրա զավակներին՝ 8 տարեկան որդուն և աղջկան: Ծառ լավ գիտեր, թե ինչ է նշանակում մեծանալ առանց հոր, ու ամուսն էր ամեն ինչ իր երեխաների համար: Մտքով էլ չէր անցնում, որ կյանքից հեռանալու է այդքան անապատելի ու անժամանակ, որ կնոջն ու զավակներին թողնելու է արցունքները աչքերին... Այդ չար ռաբաստիկ օրվանից մի քանի օր առաջ երազում տեսել էր մահացած ընկերոջը, ստա փողոցում պատմել կնոջը ու չէր կարողանում մոռանալ նրան: Այդ օրը նոր էր տուն մտել, ուշադրությամբ հետևում էր կինոնկարին, որից նրան չկարողացավ պոկել նույնիսկ հեռախոսը, որով կանչում էին նրան: Երանի գնար... 2 զանգ զանգով, քայք գնաց մահվան կանչով: Գնաց երիտասարդ հասակում՝ անհուն վիշտ պատճառելով շատերին:

ՍԵՂԱ ՀԱՎՈՐՅԱՆ



ԱՅՆՔԱՆ ԿԱՐՁ ԷՐ ՔՈ
ԿՑԱՆՔԸ

ՄԱՐԻՆԱ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ 14 տարեկան էր: Սովորում էր մաթեմատիկական թեմատով դպրոցի 8-րդ դասարանում:

Ի՞նչ գրել է մասին: Այնքան կարճ էր էն կյանքը: Գրել, որ պայծառառես մի փոքրիկ գեղեցկուհի էիր, բայց չէ՛ որ շատ-շատերն էին այդպիսին: Գրել, որ շատ էիր խելացի և մեծ ապագա էիր խոստանում: Բայց բոլոր գնացողներն էին մեծ ժողովրդի ապագան: Գո մասին մտախոյրդ է գրում: Մեղեքեղ շխարհացան հուշեր գրել է մասին. երանց չէր բավականացնի թերթի բոլոր համարները:

Անավոր ու դաժան է մրտածել, որ դու և Բեգ նմանները ընդմիջում էի հեռացել մեր կյանքից: Հավատում եմ հոգու հավերժությանը: Երեկ ձեռ անմեղ ու բարի հոգիները տեղ չունենին երկրում և պետ է սավառենին երկնում: Ամեն բան մե՛նք գգում եմ էն գոյությունը. էն երկայնությունը մեր կողին: Ամեն օր մե՛նք խոսում եմ Բեգ հետ...



ՀԵՂԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
ՊԱՊՈՅԱՆ

Ծնվել է 1962 թվականի սեպտեմբերի 3-ին, Լենինականում: Սովորել է Ե. Չարենցի անվան N 25 միջնակարգ դպրոցում, ավարտել գերազանց գնահատականներով: Հասնել է նաև N 1 երաժշտական դպրոց, ուր երաժշտության գեղեցիկ ու խոր հրրոպիոր աշխարհը բնորոշ կուն է գեղեցիկ Հեղինենի իր մեջ՝ նախորդելով նրա տեղը այդ հետաքրքիր աշխարհում, հարձր առաջադիմությամբ Հեղինեն ավարտում է երաժշտական դպրոցն ու կրթությունը շարունակում ԿարաՄուրզայի անվան երաժշտական ուսումնարանում: Վերջի նրա ավարտելուց հետո աշխատանքի է անցնում N 2 երաժշտական դպրոցում:

Քան տարեկան այս աղջիկը հոգու բոլոր թելերով կապված էր երեխաներին ու հավատում էր, որ կանախից հեռանա մեծ զգայուն հոգի, բարություն... Սակայն Հեղինեն, ցավոք, չհասցրեց զգալ սեփական երեխայի զգվանքը, և իր անսպաս գորովը շտապում էր վառել մորաբույժ թոռնիկի՝ թոթովախոս Սոֆոյի համար: Երկրաշարժի օրն էլ զոհվեց «Մանկական աշխարհ» հանրախանություն, իսկ զարմանալից այն է, որ օրեր առաջ գուշակել էր իր մոտալուտ մահը:

15-ԱՄՅԱԿԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՄ, ԹԵ՝ ՈՂՔԱՄ...
ՄՈՐ ՄՐՏԻ ԽՈՍԱԸ

ՄԱՐԻՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ ծնվել էր 1976 թ. ապրիլի 24-ին: Նման աշխարհավեր, հայկործան որբերության զոհ էլ դարձավ, դեռ 13-ամյակը չբոլորած: Ինչո՞ւ էիր մորը խնդրում, որ տորթ թխելիս, անպայման վրան 13 գրի: Միամիտ մաքր ծիծաղում էր քո շտապողականության վրա: Ի՞նչ իմանար, որ, իրոք, 13-ամյակդ չի տուն վելու: Ժպիտով ու կյանքով լի էր

Մարիամի հոգին, էրք պապը 9-րդ դարոցի փվածքների տակ կից հանեց նրան, Մարիամն այնքան ուրախ ու ծպիտով դիմավորեց հարազատներին, որ ոչ մեկի մտքով անգամ չանցավ, որ 8 օր ապրելուց հետո, կարող էր ընդմիջում հետևալ... Մաքր դառնալից համախ է կրկնում. «Ոչ որ Մալախ համն ու հուրը չունի»: Իրոք որ, այդպես է: Միրելի Մալա, քո շիրմաթումբը այսօր էլի կծած

ՀԱՐՄԻՍ ՀԻՇԱՍԱԿԻՆ

ՀԱՐՄԻՍ ԿՆՑԱԶԻ ՀՈՎՍԹՅԱՆԸ ծպտաղես, քարե հոգի և մարդամոտ աղջիկ էր: Նրա ծպիտի մեջ շատ երազանքներ ու սպասումներ կա լին: Ծնվել է 1963 թ., ապրիլի 26-ին Լուսաբոյր գյուղում, միխանիզատոր Կնյազի ընտանիքում, որի տանը դաստիարակվել, մարդկությանը պիտանի մարդիկ են դարձել երեք տղաներն ու երկու աղջիկները: Ծախք, տղաներից մեկը զոհվեց զինվորական ջրասույզ զինամասում, ինչ-

պես ազնիվ հայրենասեր: Լարիսան սովորել է Լենինականի առևտրի N 15 ուսումնարանում, որը գերազանց ավարտելուց հետո աշխատել է քաղաքի տարբեր մթերային խանութներում որպես գանձապահ: Որ քաղաքում էլ որ նա աշխատել է, բնակիչների կողմից եղել է սիրված ու հարգված իր ազնիվ ու մարդկային վերաբերմունքի համար: Ամուսնու՝ Մելիքսեթի հետ ապրում էին Երջանիկ, ուրախանալով ի-



Կըվի ծաղիկներով և 15 մուսեր կվապեն ի հիշատակ քո ծընընդի...
ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ



Իննց անդրամիկ զավակով: Լարիսան զոհվեց իր բնակարանում, լքելով ամուսնուն և սիրասուն զավակին:

ԻՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳՈՒ ՈՂՋ ԳՈՐՈՎԱՆՔՈՎ

Այս օրերին բազմաթիվ նամակներ են տոսցվում «Բանվոր» թերթի հասցեով: Գրում են երկրի տարբեր ծայրերից, զանազան քաղաքներից ու պաններից, տարբեր մասնագիտության տեր մարդիկ, ուսանողներ, ու աշակերտներ: Տարբեր են նամակագիրները, բայց նույն է նամակների բովանդակությունը: Հայաստանին հասած դժբախտությունը խորապես ապրում են բոլորը, և տարբային աղետից տուժած մարդիկ մեկնել չեն: Նրանց օգնության ձևեր մեկնելու պատրաստ են բոլորը՝ մեծից փոքր...

Այդ նամակների մեջ կար մեկը, որ գրավեց մեր ուշադրությունը: Նամակը գրված է մանկական անվարձ ձեռագրով: Որքան շեղմաբուն, մանկական հոգու որքան գորով ու զուլալություն կա այդ անվարձ տողերի մեջ...

Ահա այդ նամակը.
«Բարևներ, լենինականի աղջիկներ և տղաներ: Մենք լսեցինք ձեզ պատահած ծանր դժբախտության մասին: Ես շատ եմ ցավում ձեզ համար: Ես յոթ տարեկան եմ: Սովորում եմ երկրորդ դասարանում: Եթե ձեզանից որևէ մեկը ցանկանում է ընկերություն անել ինձ հետ, ապա թող հյուր գա մեր տուն, իսկ եթե ցանկանա, թող մնա մեզ մոտ: Մայրս համաձայն է: Ես ունեմ երկու եղբայր և յուր: Ապրում ենք մեր սեփական տանը: Ես շատ եմ ցանկանում ընկերություն անել ձեզանից որևէ մեկի հետ: Գրեցեք մեզ: Սպասում ենք...»

Իմ հասցեն՝ 356010, Ստալինոպոլի երկրամաս, քաղաք Նովոսիբիրսկոյե, Կալինինի փողոց 95, ԱՆՓԵՎԻԻԱՄ ՄԱՇԿՈՎԱՆ:
Հասցեից հերքե նույն անվարձ ձեռքը նկարել է տրև... Կարծես ցանկանալով արևի լույս ու շերմություն հայտնել բոլոր այն երեխաներին, ովքեր զանված են հիվանդանոցային մահճակալներին, կորցրել են հարազատներին ու մոտիկներին, սարել երկրաշարժի աղետալի սարսափները: Քեզ, անշուշտ, նամակներ կգրեն, Անժիլկա, և դու կունենաս լենինականցի քո ընկեր-ընկերոհները... Նրանք ի սրտն շնորհակալ են քեզանից և շույթած են քո ողբերկան անվարձ արևի լույսից ու շերմությունից...
Հ. ՏԻՎՐԱՆԻ
«Բանվոր»



ՀՐԱԲԵՅԱՆ ԿԱԿՐԱ ՌՈՌԱՐԻԿԻ

Միշտ երազել եմ, որ աղջիկս՝ Նաիրուհիս մասին տպագրվի թերթում: Այսօր, թվում է, իրականացան է երազանքս: Ավար... Ես երազում էի, որ համարադաշտացիներս կտեսնեն աղջկաս նկարը թերթում ու կկարդան նրա մասին որպես խելացի, բացմիաց, հարուստ գիտելիքների տեր աշակերտուհու, որը գերազանց գնահատականներով ավարտելով, № 6 դպրոցը, ընդունվել էր Մարտի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ և սովորում էր բարձր առաջադիմությամբ: Սակայն... ինձ փնտրվեց թղթին հանձնել միայն աղջկաս պարզ ու սովորական, այնքան կարճ կենսագրությունը՝ «Հիշողության» համար:

Սիրելի աղջիկս, դու հավերժ կապես իմ սրտում, ինձ հետ: Մայրդ՝ ԲՆՔՈՒԹԻ ՀՐԱԲԵՅԱՆ



ԿԱԿՐԱՅԱՆ ԿԱԿՐԱՅԱՆ

1986 թվականին ավարտել է Գ. Սունդուկյանի անվան (№ 20) միջնակարգ դպրոցը, որից հետո ամիջապես աշխատանքի է անցել «Օմեգա» գործարանում:

Նարինեն կյանքին հրաժեշտ տվեց դեռ քսանը չբոլորած, երբ լեզուն էր կրանքով ու բազում երազանքներով: Սիրում, անչափ սիրում էր գեղեցիկը: Ընդամենը 5 ամիս էր, ինչ Նարինեն գտել էր իր կյանքի ընկերոջը: Մտքովն անգամ չէր անցնում, որ նեղգործն ու գաղտագողի մտնենում էր ոչ ունչի հետ հաշվի չկատող դա ժամ մահը, Նա շատ էր սիրում երեխաներին, խաղում նրանց հետ, բայց չհասցրեց ռուսալեզու իր սեփական երեխայով, որին սրտատրոփ սպասում էր:



ԿԱԿՐԱՅԱՆ ԿԱԿՐԱՅԱՆ

1952 թ. փետրվարի 25-ին, Լեհիմական քաղաքում է ծնվել Անիշկան: Սովորել է Արթիկի № 1 դպրոցում: Եղել է ուսման առաջավոր, գրադվել սպորտով:

Միջնակարգն ավարտելուց հետո Անիշկան դիմեց բարձրագույն ուսումնական հաստատություն, բայց բախտ չվճարեց ընդունվել: Ավարտեց հաշվապահական դասընթացները և աշխատանքի անցավ կաբուլյի ֆարքիկայում որպես հաշվապահ:

Հարգված էր կողեկտիկ կողմից: Նրա աշխատանքը նկատվում էր, նշվում խրախուսական պարգևներով: Անուանցել էր և երեք որբացած անչափախառնների մայր էր:



ՄԱՀԱՆԱՆՔՈՒՆ ԿՆՔԵՑ

ԱՇՈՒՍԱՏԵՂՈՒՄ

ՄԻՐԱՆՈՒՑ ՀՄԱՅԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՏԱՆԸ ծնվել է 1925 թվականին, Լեհիմական քաղաքում: Գիմնազիան ավարտելուց հետո, սովորել և ավարտել է մանկավարժական ինստիտուտը: Հանգամանքների բերումով չի աշխատել իր մասնագիտությամբ: 1983 թրվականից նա ստանդարնային կոմպրեներների գործարանի հաշվապահն էր:

Սիրամուշը աշխատում էր բարեխղճորեն և աշխատանքում էլ կնքեց մահկանացուն 1988-ի դեկտեմբերի 7-ին:



ՄԱՅՐ ԻՄ, ԱՆՈՒԹ ԸՄ

ԱՆԱՀԻՏ ՎԱՀԱՆԻ ԶԱՅԻՄՏՏԱՆԸ ծնվել է 1937 թ. հունվարի 28-ին, Լեհիմականում:

Որբան քաղցր է ճնշում ՄԱՅՐ քաղց... Երբ հայրս 52 տարեկանում հանկարծամահ եղավ, քոբոս խոր վեշտով ցավակցում էինք հայրիկիս համար, չիմանալով, որ երեք տարի հետո ողբերգաբար զոհվելու էր նաև մայրս: Հորս մահից հետո մենք մայր ունեինք և շիրմանում էինք այդ զգացումով:

Հորս մահից երկու տարի անց մայրս աշխատանքի անցավ կոշիկի ֆարքիկայում: Նա և մայր էր մեզ համար, և մայր: Երկրաշարժը տարավ նաև մեր սիրելի ու հարգազան մայրիկին, չիովին որբացնելով մեզ:



ՄՈՐՈՒՑԱՆ ԳԵՎՈՐԳ

ԿԱՐԱՊԵՏԻ—ծնված 1948 թրվականին: Որբի դեմքեր ու ծանր մանկությունը չխանգարեց, որ Գևորգը մեծանա որպես իսկական մարդ, մարդ մեծատառով: Անավարտ մնացին Գեվորգի երազանքները: Նրա երկու զավակներն էլ՝ հնազանդ ճակատագրին, իրենց կյանքը հյուանդու են մեծ մեծակ, առանց ծնողների այնքան անհրաժեշտ օգնության: Առավել անհավորն այն էր, որ չգտնվեց անգամ Գևորգի դին: Նրա տունը այրվել էր:



ՄՈՐՈՒՑԱՆ ԷԼՄԻՐԱ ԳՈՐԻ

ԳԵՂԻ—ծնված 1949 թրվականին, Էլմիրան ավարտել էր առևտրի ուսումնարանը, սակայն չէր աշխատում ոչ մի տեղ: Գոռնում էր, որ կարևորը լավ երեխաներ, լիարժեք մարդիկ դաստիարակելն է: Նա ողջ էությամբ իր երկու երեխաներին էր նվիրված, ապրում էր նրանց ամեն հոգսով ու որակությամբ: Էլմիրան իր մահկանացուն կնքեց տանը՝ ամուսնու հետ միասին,



ԳԱՐՄԱՆ ԱՐՉԱԿՈՐԻԿԻ ՀԱՐՎԱԾՈՎ

Այդ դասան արժավիրքը ինձ էլ բաժին հասավ, խելով ինձանից 25-ամիս ամուսնու և դեռ առատուր չբոլորած մայրիկիս կյանքերը: Ամուսինս մտաշքով օտիակահանում, չհասցնելով դուրս փախ չել: Հեռացավ կյանքից ՄԱՐՏԻՆ ՀՈՒՆԱՆԻ ԳՈՐՏՅԱՆԸ, սղոպես էլ չիմանալով տղա՝ ծնվեց, թե աղջիկ, որին նա թողեց մեզ որպես միակ ժառանգ, որպես իր շարունակու թրուն:



ԼՅՈՒԲԱ ՍՈՒՐԵՆԻ ԻՆԵՆՏԱՆ

Աշխատում էր գոյակեղենի արտադրական միավորման էլաուիլ թելի արտադրամասում: Արտեղ կոպից նրա կյանքի թելը: Բազում նարտակներ ուներ սիրելի մայրիկս, իրձեր ու երազանքներ: Բոլորը մնացին անկատար: Ծաղկո ու տիխրությունները, մտաբերելով նախաներկաշարժյան երջանիկ օրերն ու դիպվածները,



ՄԻՔԵ ԱՍՏՎԱԾ ԶՏԵՍԱԿ

ԳՐՈՒՄ Է ՈՐԴԵՎՈՐՈՒՑՈՒՑՈՒՄՆԵՐ՝ ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԽԱՐԱՆՅԱՆԸ, ՍԳԱՌՈՎ ԳՍՏԵՐ՝ ԵՈՒՇԱՆԻԿ ՈՒՄԵԿԻ ԳԱՄԳԱՐՅԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ:

Ծուռանիկը ծնվել է 1931 թրվականի մայիսի 4-ին, Լեհիմական քաղաքում, ծառայողի ընտանիքում: Հանախել է գույպագործների № 2 մասը մանկապարտեզը, ապա՝ № 8 դպրոցի 1-ին «Գ» դասարան: Նոր էր դարձել տատանապաշտանակա, երազում և ամաչկուտ աղջիկ էր, սիրում էր անընդհատ երգել և պարել, վազվել և խաղալ: Պարում էր նազանքով և սովորեցնում իրենից փոքրերին: Զբաղեցնում էր իր երկու քոյրերին և եղբորը:

Ժամանակից շուտ հասունացած ու զարգացած երեխա էր: Գրավիչ և թախծուտ աչքերի անկյուններում կյանքի ծարավ կար: Ծառայում էր անգամ խոսելիս, կարծես զգում էր կյանքի կարճատևությունը: Գեղեցիկ անդնագործում և նկարում էր: Այդ օրը ոտուց դասին խաղ էին խաղալու տանից տարավ խաղաղիքները: Ել վերջին դասին Սուսաննա Ազատյանցի հետ նախատվեցին...

ԳԱՐՄԱՆԻ ԿԱՄՍԱՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դեկտեմբերյան աղետը չբխնացեց նաև 33-ամիս Գառնիկ (Կարո) Կամարի Հարությունյանին: Ծնվել էր մայիսյան մի սրբաձատ օր ու իր բնավորությամբ նման էր այդ ամսին՝ կյանքով ու արարուժով լեզուն, կենսության: Նրա հատար չկար «անկարկել» առվածը. ինչ նպատակներ ու ցանկություններ ունենար, կհետք է կատարեր ու ավարտին հասցներ: Օժտված լինելով մեծ կամքով ու վճռականությամբ, չէր հուսափափում դժվարություններից:

Գերազանց ավարտելով №

18 դպրոցը, նույն հաջողություններով էլ ընդունվում և ավարտում է Երևանի պետական պարանի ֆիզիկաչի ֆակուլտետը և աշխատանքի անցնում հայրենի քաղաքի նորարար «Էլեկտրոն» գործարանում որպես գլխավոր էներգետիկ:

Սիրում էր իր մասնագիտությունը սպիրում գործարանի հաջողություններով, ընկերների հոգսերով ու նվաճումներով: Իրեն շրջապատել էր իր նման աշխատանքով ու Հայաստանի հոգսերով ապրող անթիվ ընկերներով: Ու-

ներ բազում ծրագրեր՝ կապված հարազատ գործարանի, պլանների ու իր ձեռքերով եղբոր հետ կատարած նոր տունը 7 երեխաներով լցնելու հետ: Նա 3 երեխաների հայր էր, երբ վրա հասավ անսպասելին: Նոր հիմնադրած գործարանի փլուրտակների տակ էլ կնքեց իր մահկանացուն՝ Երևանից գործարանի առաջին մասնաշենքն ընդունելու ժամանակ մասնագետներից կազմված հանձնաժողովի հետ:

Ահա՛ մեր վիշտը միանգամից ծերացրեց Գառնիկի մահկանաբար՝ "ողներին, սևազգեստ դարձրեց սիրաուն կնոջը, հոր կարոտով լցրեց



երեք երեխաների սրտերը, որոնցից ամենափոքրը՝ Դավիթը, որ չի ճանաչել հորը, քոյրից կարոտով է սպասում նրա անհավատալի վերադարձին:



ԱՇԽԵՆ (ԱՍՅԱ) ԹՈՒՐՆԵՆԻ ՄՈՒՐԱԿՅԱՆ

Ծնվել է 1931 թվականին, բանվորի ընտանիքում: Մովորել է N 5 դպրոցում, որն ավարտելուց հետո ուսերին զգալի է ընտանիքի հոգս ու կյանքի զմայարությունների ծանրությունը: Մայրը աշխատել է դրամ, իսկ փոքր աղջիկը անտրուսն էր ու համբերատար հոգացել է տան գործերը, խնամել ընտանիքի ու եղբորը:

Աշխենը ամուսնացել է 1954 թվականին, ամուսնու հետ կազմել տար ու երջանիկ օջախ՝ հայտնաբերելով մեծ հույսեր կուսակույցի որդիների հետ: Նա հասցրեց ամուսնացնել սրվագ որդուն և ուրախանում էր ժիր ու աշխույժ թոռնիկներով: Պատրաստվում էր ամուսնացնել երկրորդ որդուն, տեսնել նրա հարսանիքը ևս, բայց... Հետագայում անվերադարձ վնասակար թողնելով ամուսնուն և որդիներին:



ԱՐՔՈՒՆ (ԳԵՎՈՐԳ) ԳՐԻՍՅԱՆ ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

Ծնվել է 1967 թվականին Լեհիստանում, ավարտել Խ. Արտյանի անվան N 12 դպրոցը, ապա ուսուցիչ շարունակել առևտրի ուսումնարանում: Բնակությունը ունի էր, բարի, հրազդաց: Սիրում էր երաժշտություն և նվագում էր ակորդեոնի վրա: Կատակասեր էր՝ կատակում էր թե մեծերի, թե փոքրերի հետ: Բանակից վերադառնալով աշխատում էր մանկական համալսարանում որպես վաճառող: Երկրաշարժի օրը, այն ամառը վայրկյաններից մեկ րոպե առաջ, մտել էր խանութ, զինակից ընկերոջ հետ ծխախոտ գնելու համար: Մղտել էր ներս՝ չկարողանալով այլևս դուրս գալ:



ՎԱՐՄԵՆԻՔ: ԱՐՏԱՍԵՆԻՔ ՎԱՐԻՔՅԱՆ

Ծնվել է 1922 թվականին հոկտեմբերի 10-ին, Լեհիստանում: Սկզբնական կրթությունն ստացել է N 5 դպրոցում, ավարտելուց հետո ամուսնացել և կազմել է երջանիկ ընտանիք՝ ունենալով երեք տղա՝ Էդուարդը, Գրիգորը և Հովակիմը: Վարսենիկն աշխատում էր մանկաբանական ֆարմակոլոգիայում, սիրված ու հարգված էր ընկերների, շրջակա տի կողմից:

Այն ամառը օրը, հարսի հետ միասին, ամենի զոհ դարձավ՝ մնալով փրկված շենքի տակ:



ԳՅՈՒԼՇԱԲԱՍՏՈՒ ԱԳԼՈՋԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1953 թ. մայիսի 5-ին, Բաշկիրիա քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է ճնշողակայանում, իսկ 1969 թվականին եկել է Լեհիստան և աշխատանքի անցել մանկաբանական ֆարմակոլոգիայում որպես մանուկ բանվորուհի: Առաջավոր բանվորուհի էր, մշտապես գերակատարում էր առաջադրանքները: 1978 թվականին ընտանիք է կազմում Գրիգոր Առաքելյանի հետ, ունենում երկու զավակ՝ Հարությունին և Սարգսին: 1988 թ. դեկտեմբերի 7-ին Գյուլշաբաստուն անունով զոհ դարձավ:



ԺԵՆՅԱ ԷՒՈՒԱՐՄԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1979 թվականին հունիսի 16-ին, Լեհիստանում: 1985 թվականին ընդունվել է N 16 միջնակարգ դպրոցը: Մովորում էր 3-րդ դասարանում, ուսման առաջավոր էր, մասնակցում էր պիոներ — դպրոցականների պալատի խորհուրդին:

1988 թվականին դեկտեմբերի 7-ին, երբ սկսվեց ամառը, ժենյան իր հասակակիցների հետ դաս էր նստած: Իսկ նրա վերջին դասն էր:

«ԵՆՈՒՆԻՑՈՒՆԻ» ԹԱՂԱՄԱՍ

Սա Լեհիստանի բնակիչի այն հատվածն էր, որ օրերի առաջ հայտնաբերվել էր իտալական բազմաշարի շենքերի մի ամբողջ համալիր: Դրանցից ութը տասներկու հարկանի էին, մնացածը՝ ինը: Էին... որովհետև այժմ այդ հայտնաբերված շենքերը ընդամենը փլվածքներ են, այնպիսի ըստույգ՝ ավազարարներ:

Փլատակների շուրջ անհրաժեշտ տեխնիկա է կատակվում: Ընթացում են երկրորդ փուլի՝ տարածքի մաքրման և աղբի դուրսբերման աշխատանքները:

Իսկ այդ գործը իրականացնում են Սրենբուրգի մարզից սեփական տեխնիկայով եկած աշխատանքային շեփաները:

— Առաջին շեփանը (84 մարդ) Լեհիստան է գալիս ներդրողների 10-ին և անմիջապես ձեռնամուխ է եղել փրկարարական աշխատանքներին: Տղաներից շատերը ջանկատվում հայտնից ցին շարունակել աշխատանքը երկրորդ փուլում, պատժում է չոկատի անդամ Դգոր Պավլիկին:

Հոկտեմբերի 1-ին կազմում շինարարական տարրեր մասնագիտությունների տեղ մարզիկ են, Հայաստան է եկել մի անկեղծ ու ազնիվ ջանկարիչներ՝ օգնել ծանր հրազդեհում գտնվող հայ եղբայրներին, որքան հեռավոր է շուտ վերադառնալ երկրաշարժի ավերածությունները, կառուցել քաղաքը:

— Այստեղ կմտանք այն անկու ամբողջ երկու տարի, շեփաները շարունակ կլին խարիսխ մեկը մյուսին: Արդեն այս տարվա ընթաց

յում պետք է իրականացնենք 3,8 միլիոն անգլիական շինմուտածային աշխատանք: — տեղեկացնում է չոկատի հրամանատար Նիկոլայ Նոսովը:

Տղաները բնում են վերաների տակ, հենց թաղաժամի զիմաց: Ու թեև պայմաններն այն չեն, բայց կրակը չեն տրանջում, գիտեն, որ են եկել և ինչու: Աշխատանքային հուշերը չի ընդմիջվում: Ահա ինչու մեզ շահողվեց գրուցել նրանցից շատ-շատերի հետ: Հոկտեմբերի կազմում փուլների հետ մեկտեղ օգնելու են եկել զազախն ու բաշկիրը, թաթարն ու վրացին:

Երբ ազգությամբ վրացի վարպետ Շոթային հարցրինք քաղաքը կառուցելու նախատեսվող ժամկետի հնարավորության մասին, պատասխանը եղավ միանր շանակ:

— Ոչ, թե հնարավոր է, այլ պետք է կառուցել: Ուրեմն կկառուցվի: ... «Մուսկյունի» թաղամասում երեք-չորս շենք էր մնացել կանգուն: Եվ լուսա մուտների լվացքապարաններից չհավաքված հատուկներ շորերը հեղուկից խտրական պատրանք են լսել ծում, թե ներսում գուցե մարդիկ են ապրում: Բայց միայն հեղուկից...

Քաղաքում արդեն վթարային շենքերի պայթեցումներ են կատարվում: Այսօր արդեն պայթեցվել են երեք այդ մի քանի կիսականգուն բազմաշարիները:

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՏԹԻՆԱՆՅԱՆ «Բանվոր»



ԳԱՅԱՆԵ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԶՈՂՐԱՐՅԱՆ

Ծնվել էր Լեհիստանում, 1965 թվականի փետրվարի 14-ին:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց մանկաբանական ուսումնարան: Աշխատանքի նշանակվեց Արագածի շրջանի Գեղադիր գյուղի դպրոցում որպես ավագ ջուկատավար և որսաց լեզվի ուսուցչուհի:

Ամուսնացած էր: Ուներ սևաչյա մի զավակ՝ ծնված

1987 թ. դեկտեմբերի 15-ին: Գայանի և նրա ամուսնու Աշոտի ընտանեկան երջանկությունը կարճ տևեց: Նրանք սպասում էին երկրորդ զավակին: Երկրաշարժը ավելի քան դաժան գտնվեց՝ չինախելով ոչ միայն Գայանին, այլևս ամուսնու զավակին, այլև փոքրիկ ԱՎԵՏԻՔԻՆ: Գայանեն իր տղայի հետ ամենի զոհ դարձավ Կոշտոյան փողոցի N 5 «բ» շենքում:



ԱՆՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵՐՈՐԵԱՆ

Համախառն կարելի էր հանդիպել հմայիլ դեմքով միջահասակ աղջկոջը, որի կյանքի հիսունմեկ տարիներն ասես անցել էին վազրով: Բայց զի նրա սովորական քայքայ էլ վազրի էր նման:

Գնդերն և Թիրակացի փողոցների խաչմերուկի քարձրահարկի շենքի առաջին հարկում էր այն կոշիկի խանութը,

որտեղ աշխատում էր տիկին Աճճիկը: Նրա քարիքաժողովրդական փրկարարները բազում այնպիսիներին մշտական համախորդ էր դարձրել:

Հենց խանութում էլ նա կրնցել իր մանկանացուն, թողնելով երկու զավակների և երեք թոռների: Նա ամենքի հանդեպ կատարեց իր ճնդական, մարդկային և քաղաքացիական պարտքը:

Ընտանիքը որոշել էր 1989 թվականին նշել Արեգնազանի ծննդյան կես դարը, Ռուսիոյում էին փնտրում, մահ գրտան, արև էին ուզում, ձյուն հկալ:

Արեգնազանը ծնվել էր ծառայողի բազմանդամ ընտանիքում: Ընտանիքում սովորեց խնամել իրենից փոքրերին, մարդատու լինել, շահել ամենքին, լեզու գտնել ու շփվել ամեն մեկի հետ: Պատանական չէր, որ նրան սիրում ու հարգում էին բոլորը:

Արեգնազանը երեք տասնամյակից ավելի աշխատեց

գույլա-նասնկեղենի ֆարմիկայում: Տարիների փորձին գումարվեցին աշխատանքային նը, նվիրումը: Կույնակվում նա լավ մարդու, գործիմաց ու հմուտ մասնագետի համբավ ուներ: Արեգնազանը վաղ արթնացած մարդու պես շատ քան հասցրեց. նա արդեն տասնիկ էր և պատրաստվում էր ամուսնացնելու վերջին կրթուներ որդուն, սակայն...

Հարազատների, երկու որդիների ու թոռների սրտից երբեք չի ընկել քարի, աշխատանք ու կարողին մոր, տասնիկի կերպարը:



ՉՏԵՍԱԿ ԻՐ ԿՅԱՆՔԻ 29-ՐԻ ԳԱՐՈՒՆԸ

Մաքրումին շտեպով իր կյանքի 29-րդ գարունը: Մի կյանք, որ ամբողջովին նվիրվել էր ուսմանն ու աշխատանքին, արեւ այն ամենը մաքր կայրյանը, ինչ եւս ուժերն են ներել: ՄԱՐԿՈՒՆԻ ԿԱՐՈՒՆԻ ՄԿՐՏՅԱՆԸ գերազանցությամբ ավարտեց ինչպես Պետրոս Գուրջանի անվան միջնակարգ դպրոցը, այնպես էլ բուժուսումնարանը: Կարծես ծնվել էր գրուրյան ֆայր դառնալու, որը մեզ այսօր այնքան շատ է պետք:

Ուսումնարանի վկայականով աշխատանքի անցավ N 2 մանկական հիվանդանոցում: Աշխատում էր ամբողջ նվիրումով, առնվում յուրաքանչյուր երեխայի համար, հիվանդանոցում անփոփոխ գիշերներ էր անցկացնում: Այն մոտանում երեխաներին անզամ աշխատանք

Ինչ ենթա: Պետք է անպայման զանգեք, իմանալ յուրաքանչյուր երեխայի զգացողությունը:

Մաքրումին բարեհոգի էր և սիրված անձնավորություն կոչվելով, տանը: Ընտանիք էր կազմել, հպարտանում էր եռամյա ՏԻԳՐԱՆԻԿՈՎ: Տեախին հոգսերով շրջապատված կինն իր մեջ ուժ էր գտնում հաղթահարելու աշխատանքային դժվարությունները: Փոքր էր մարմնով, բայց մեծ հոգի ուներ, ուժեղ կամք ու բնավորություն: Չկորցրեց իր ազնիվ նվիրումը աշխատանքին: Պարտանալու ու նշտապան այդ ազնիվ կինը առաջին անգամ բացակայեց աշխատանքից ղեկավարների 7-ին և առնվեալ...

Մեկ համարացել ենք այս մեծ վշտի առաջ: Արցունքներն անզամ էման են, անզոր...

ՄԱՅՎԱՆ ՊԱՅԻՆ ԷԼ ՉԼՔԵՑԻՆ ԻՐԱՐ

Պեկտեմբերի չարագետ օրը տանն էին: Ջոճվեցին բոլորը միասին: Մամվան պահին էլ չլքեցին իրար:

ՊԱՐՈՒՆԻ ՅՈՒՐԻԿԻ ՎԱՐԿԱՆՅԱՆԸ ծնվել է 1966 թ. օգոստոսի 3-ին, Լենինականում: Սովորել է Հակոբյանի անվան դպրոցում, ապա Ռուսաստանի Գորոխովի մասնագիտություն է ուսանել N 39 պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոցում: 1984 թվականին գորակոչվել է խորհրդային բանակ և ծառայել Գերմանիայում: Վերադարձել է 1986-ի աշնանը: 1988-ի մայիսին հանդիպել է ՎԱՐԿՈՒՆԻ ԱՐՄԱՀԱՄԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, սիրելի են և ամուսնացել: 1988-ի օգոստոսի 27-ին հարսանիքն էր: Ուրախությունը կարճ տևեց՝ ընդամենը երեք ամիս: Վարդուհին ծնվել է 1970 թվականին, Լենինականում: Նոր էր բոլորել 18 տարին, թանաճեց ծաղիկ հասակում, դեռ չմայրացած:



ՍԱՄՎԵԼ ՅՈՒՐԻԿԻ ՄԵԼՔՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1952 թ. վնականին, Լենինականում: Աշխատել է տրոլեյբուսային վարչությունում որպես վարորդ, այնուհետև՝ տաքսու վարորդ մինչև ողբերգության օրը:

ՀԱՅՎԱՆՈՒԾ ՂՈՒԿԱՍԻ ՄԵԼՔՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1958 թվականին: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Կ. Մուրզայի անվան երաժշտական ուսումնարան: Որք էր, մայրը մահացել էր, երբ Հայկանուշը եղել է 15 տարեկան: Ուսումնարանում սովորելու ժամանակ ամուսնացել է Սամվելի հետ: Ունենին երկու երեխա:



ԱՂՈՒՆԻԿ ՍԱՄՎԵԼ ՔՈՒՆՅԱՆԻ և ԱՐՄԱՀԱՄ ՄԵԼՔՈՒՆՅԱՆԻ ծնվել է 1982 թ.: 28ապրիլից սովորել հայոց սպորտընդ: ՅՈՒՐԻԿ ԳԱՍՊԱՐԻ ՄԵԼՔՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1980 թվականին: Սովորում էր N 9 դպրոցի 2-րդ դասարանում:



ՎԱՐՍԻԿ ԳԱՐՈՒՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1979 թ., Լենինականում: Սովորում էր N 10 դպրոցի 3-րդ դասարանում գերազանց առաջադիմությամբ: 5 գնահատականներով հատկապես շատ էր ուրախացնում իր սիրելի Վարդուշ տատիկին: Փոքրիկ ու վախտ կապուտաչյա աղջնակը՝ Վարսիկը հասցնում էր ամեն ինչ՝ օգնել տատիկին, մայրիկին, իրենց դասարանի թույլ աշակերտներին, հաճախել երաժշտական դպրոց, զեղագիտական կենտրոնում մասնակցել ֆրանսերեն դասընթացներին, զբաղվում էր սիրով մարմնամարզությամբ: 1990 թ. նոյեմբերի 25-ին լրացավ 11 տարին: Ինչ նրբագեղներ ուներ, որին կնկիրվեր... մնաց անհայտ:



ՍՈՒՐԱՆՆԱ ՌԱՆԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է Լենինականում 1966 թ., օգոստոսի 22-ին: Սովորել է Մեսրոպ Մաշտոցի անվան N 29 դպրոցում և N 3 ուսումնարանում: Աշխատանքի է անցել Լենինականի կոշիկի ֆաբրիկայում որպես բանվորուհի: Բարեխիղճ և որակյալ աշխատող էր, բազմիցս արժանացել է պարգևատրումների: Մարդասեր էր, աշխատասեր և բարեխիղճ: Պատրաստվում էր եղբոր հետ Չեխոսլովակիա մեկնելու, սակայն չհասցրեց: Ահավոր երկրաշարժը վրահասավ ավելի շուտ, քան բաղձալի օրը: Մաղիկ հասակում անմեղ գոն դարձավ աշխատանքի վայրում:

(Այնպես՝ 2-րդ էջում)

— Ո՛վ կա, ո՛վ չկա, նույն հարցն էր շրջում ուրվականի պես: Պետք չէ տրտելու, Հույսը չի մարել, Բանգի կանգուն է արմատը նախնայց: Տուն հաստ հարթած: Լուսանկարը մահացած տատիկու Մանեկայի մեջ պատկեր էր հանգիստ, — Ո՛վ կա, ո՛վ չկա, — Ողբում մեռելոց... — Կոչում ապրողաց... 'Իմանալ է պետք, Կանե ու կյիներեք!:

Օ Ր Հ Ո Ւ Ս Ա Ն Լ Ք Ո Ւ Թ Յ Ա Ն

Մեղա լեզ, մեղա, Մեղա լեզ, աստված, Ռոտեղ ե՛ք լսել՝ Մեղանը՝ զագաղ, 'Խագաղը՝ սեղան, Չկան պահածո, Նաև հաց վրան: Մեղա լեզ, մեղա — Այ կողմը զագաղ, Չախ կողմը զագաղ, Ծեղը զագաղ, Ներեք զագաղ, Մեղանդում կրակ, կուշ եկած մարդիկ, Մագեր էիրան, Չեղեքն այրված, 'Իմեքեր մոխրոտ: Մեկն էլ մտնեցավ հայրենով տարած, Մեռելի նման փրվեց զագաղին,

Մի ինչ հաց կարեց — Մե բախտի նման այս ներմակ հացն էլ Չէ, կուշ չէր գնում: Հարցում արեցին — Մեռած յուրություն: Երեկ էր մատաղ այս մարդը արել, Ախ, մատաղի մեջ մի՛թե աղ չկար՝ Այ հորը գտավ, Այ մորը հիվանդ, Այ իր մանկանը՝ 'Խալիքին բլվառ, Այ էլ կնոջը, կնոջը հոյ, Որ Կամիտառ, կամ գուցե Սևակ Ախ, պիտի ծներ: Բոլորն էլ անցան փլատակի տակ, Բոլորն էլ դարձան կրակին գերի, Ու չհասկացան: Ու չհասկացան Մոխրակույտերից գոն լոկ մի ձայն... Բարձրացավ կամաց, Այրված ձեռքով դես ու դեն արեց Խառույկը վառված Բառաչեց ուժգին, Ուժգին հոհոհաց — Բարացան մարդիկ, Բարացա՛ր աստված: Մեղա լեզ, մեղա, Կանե մի սպոր, ստի՛ն ապավեն, Մոխրակույտերից գոն լոկ մի ձայն:

Օ Ր Փ Ր Կ Ո Ւ Թ Յ Ա Ն

Շուն հավատարիմ Բեզ մատաղ լինեմ, 'Խա օր ու զիշեր 'Կյանք էր փնտրում (Շարունակությունը՝ 8-րդ էջում)



ԱՆՍԱԽԱՆՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ

Մեկն է 1958 թվականին, Լեհիստանի Բաղադում: Սովորել է Կիրովի անվան N 2 միջնակարգ դպրոցում: Գնալ է աշխատել միջնակարգ, երբ Ախախախանյանների ընտանիքին հասավ առաջին դժբախտությունը. Կարինեն զրկվեց մորից: Ընտանիքի հոգսը ժամանակից շուտ ընկավ աղջկա ուսերին: Սակայն Կարինեն ուներ կամք ուժ, նա կարողացավ ստանձնել հոր ու միևնույն եղբոր խնամքը: Նա կարողացավ իր ձեռք վերցնել տնային գործերը և կարգապահությամբ կատարել:

Գարգն ախտաբանաց հետ ազդիկն ընդունվեց «Մազնոն» գիտահետազոտական ինստիտուտը, միաժամանակ հեռակայնով Գիլիջանի ուղիտեխնիկական տեխնիկումում: 1980 թվականին ամուսնացավ, սակայն ծնե իր նման զեղեցիկ ընտանիք: 1982 թվականին ծնվեց Կարենը: Մայրը երջանիկ էր, նա մտադարձավ ծանր անցյալը և ավելի շեղմագին փայփայելից իր զավակին՝ մեծ հույսեր ու երազներներ կապելով նրա հետ: Երազում էր որդուն տեսնել աշակերտական սեղանի առջև, երազում էր նրա հագին սպիտակ խալաթ տեսնել, երազում էր...

Գիտահետազոտական կենտրոնի 7-ի առավել լավ կարենին ուղարկեց մանկապարտեզ և զնաց իր աշխատանքի վայրը: Զնվեց «Մազնոն» ինստիտուտում:

Մերում էր Կարինեն գարունը: Նա զեռ վաղ աշունհից կանաչ գարուն էր տեսնում: Ինչպիսիք էր սպասում: Սպասվող գարունը արժանա հիշատակ էր լինելու նրանով, որ լրանում էր Կարենի 7 տարին: Նա պատրաստվում էր դպրոցի:



ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Իրավանցի էր նրանց երազանքը: «Վարդապետ» թաղամասի կոոպերատիվ շենքերից մեկում նրանք հիմնել էին իրենց հարմարավետ, տաք օջախը:

Երջանիկ էին իրարով երկու սիրասուն քաղիկներով:

Զարադետ այդ օրը փշրեց ամեն ինչ, կտրեց կրիտասարդ ընտանիքի երազանքների շղթան:

ՎԱՆԻԿԱ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

(ծնվ. 1939 թ. օգոստոսի 6-ին) ոչ միայն օրինակելի հայր էր ու ամուսին, այլև սիրված

գործընկեր ու պարտաճանաչ վարորդ տրոլեյբուսային պարկույծ: Զարադետ, նրան չհաջողվեց դուրս գալ մամվան ճիւղաններից ու ամենամանկան 4-ամսա Անուշավանին կրծքին սեղմած, զոհվեց շենքի փլուզմանից: Մայրը Անուշավանի մայրական տատն ու պապը, որոնք սիրով ու գուրգուրանքով խնամում են ողջ մնացած թոռնուհուն Արմուշիկին, հիշում են, թե որքան օժտված ու խելացի երեխա էր ԱՆՈՒՇԱՎԱՆԸ (ծնվ. 1984 թ. նոյեմբերի 18-ին), ինչպես էր ար-



տամանում, որքան սիրում ըզրոսնել ու ինչքան ուշադիր էր շրջապատի երևույթների նկատմամբ: Երեխայի հայրն ու մայրը փոքրիկի մեջ նկատում էին օր-օրի անող հետաքրքրությունն ու ընկալունակությունը:

Դաման ճակատագրի զոհը դարձավ նաև երեխաների մայրը՝ ԱՐՄԵՆՈՆԷՆԻ ՌՈՒԲԵՐՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ (ծնվ. 1965 թ. դեկտեմբերի 31-ին): Իր կյանքի 21-րդ զարմանքը հրաժեշտ տվեց երիտասարդ կինը: Անապարտ մնացին նրա երազանքներն ու ասպազի կանխագծումները:




ՆԱԻՐԱ ՄԱՐՏԻՆԻ
ՏՈՒՆՅԱՆ

Նա ծնվեց մարտին, երբ բնությունը գաբրան էր ապրում: Անհուն բարություն ու լեհշուրջամբ եկանեց

սերն ու հարգանք իր ընկերների, հարազատների:

Նորից գարուն է, ետրից նա նշում էր աղբրկա՝ Նաիրայի ծննդյան 18-ամյակը, սակայն առանց նրա: Նա մնաց հավերժ՝ 15 օրանկան, մեաց N 2 դպրոցի փլատակների տակ: Սակայն ինձ համար Նաիրան կենդանի է, ապրում է իմ մեջ... Երբ ես տխրում եմ՝ վարսերս է շոյում անտես ու հուշիկ, երբ արտասվում եմ, արցունքներս է սրբում կամազով, և անտեսի վշտից այնպես երբեմն ուզում եմ քար ձր գոռայ, իսկ նա կարծես փարվում է իմ պարանոցին, ուզում է մեղմել վիշտն իմ ահավար:

ԱՆԱՇԻՏ ԴԱԶԱՐՅԱՆ



ՇՐՈՒՆԱՐՅԱՆ ՍՄԻՍՏ ԳՐԻԳՈՐԻ— ծնվել է 1930 թվականին, Ազատամուտ: Սովորական կենսագրություն ունի այս մարդը: Զորակոչվել է բանակ, կատարելով զինվորական պարտքը՝ վերադարձել հայրենի գրող, ամուսնացել է, ունի 4 երեխա: Սընքատն աշխատում էր ավտոբուսային տնտեսությունում, ավտոբուսի վարորդ էր: Բազմաթիվ սարգանքներ ու պատվոգրերը վկայում են նրա լավ աշխատող, մարդ լինելը, իսկ այն, որ միջևն օրս ընկերները չեն մոռացել ու ցա-



վով են հիշում նրան, գալիս է անկու, որ Ամրատը լավ մարդ է եղել, սիրված ու հարգված ընկեր: Զարաբաստիկ աղետի օրը, ըստ գրաֆիկի, Ամրատը աշխատանքի չէր, բաց գնացել էր: Հենց այստեղ էլ մեքենայի մեջ նա կնքում է մահկանացուն:

ԵՂԻՍԱՆԱՐՅԱՆ— ՎԱՐԳԱՆՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՍՄԻՍՏԻ— ծնվել է 1960 թ., Լեհիստանում: Գայանեն գերազանց գնահատականներով ավարտել է Գուշիկի անվան դըպրոցը, ընդունվել պոլիտեխնիկում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել «ՕՏՆ-



գա» ռեգիստրների գործարանում: Գայանեն մաղամտ ու առաքինի կին էր, որի կարիքը ամենուր և միշտ ըզգում էին, Մշտամպիտ այս հայտնի մի երազանք ուներ՝ յոթը որդով սեղան նստել: Ավարտ, չար աղետը շողեց, որ մեծամային այն երեք փոքրիկներն էլ:

ՎԱՐԳԱՆՅԱՆ ԼԻԱՆԱՍՏԵՓԱՆԻ— ծնվ. 1983 թ. ՎԱՐԳԱՆՅԱՆ ՊԱՐՈՒՅՐՍՏԵՓԱՆԻ— ծնվ. 1985 թ. ՎԱՐԳԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐՍՏԵՓԱՆԻ— ծնվ. 1988 թ. Երեք այս փոքրիկները թոռնուհին զեռ շնորհակա: Զոհվեցին իրենց տանը՝ մոր հետ:

ՍԻՐՈՎ ԿՅՅՈՒՐՆԿԱԼԵՆԵՐ

Քանկագին բարեկամներ, հայ ժողովրդի ողբերգությունը ծանր վերապրեցին բարություն: Վիշտը միայն ձեռք չէ: Իժբախտության պահին են ճանաչվում ընկերն ու բարեկամը: Երբ մեծ կարողանան գոնե փոքր-ինչ քերական: Ընդ վիշտը, ուրեմն կատարած կրիկներ բարեկամի ու ընկերոջ մեծ պարտքը:

Ինձ զեղեցիկ փողոցներում ու գրոսայգիներում: Անբեռն լի ապավորություն է թողել ձեր հաղաթը և ավաստում ենձ վրա հասած աղետի առիթով:

Մեր ընտանիքը լեհիստանական աղետյալների օգտին տրամադրել է 200, ուրիշ: Քիչ է, բայց նվիրել են ի սրտե: Խեղճում եմ հաղաթային բերքում տպագրել իմ նամակը, թող կարդան իմ բարեկամները և հյուսիս շան մեզ, մեծ սիրով կրեցիսրեկայենք հրանց: Երբ երեխաներ կան, նրանց համար տանք կատեղիներ պայմաններ:

Սպասում ենձ ձեզ՝ ԿԼԻՄՈՎԱ ԼԻՊԱ ԽՎԱՆՈՎՆԱ:
«ԲԱՆԿՈՐ»

ԿԻՄԱ ՄԵՆԱԿԻ

Ծնվել է 1939 թ., օգոստոսի 25-ին, Լեհիստանում: Գեղեցիկ, խելացի աչքերով այս հայտնուն բախտ է վիճակվել իր սերնդակիցների համեմատությամբ առաջադու հիմնավոր դաստիարակություն ու կրթություն: 1948 թ. նա Օլգինյան գիմնազիայի սանունի էր: Իսկ 1956-ին արդեն՝ նույն դպրոցում աշխատում էր որպես ջոկատավար, Կիման աշխատել է նաև Լեհիստանի կարի ֆաբրիկայում: Օֆտոլ, աշխույժ, մարդկանց դարդն ու ցավը լսող ու դարմանող բնավորության շնորհիվ նա

ՍԱՐԳՍՅԱՆ

շուտով վաղելում է կոնկրետի համակրանքը, որն էլ նրան ընտրում է գործարանի արհմիության նախագահ: Կիման սիրում էր նաև հասարակական աշխատանքը: Տեղական խորհրդի պատգամավոր էր, ամեն կերպ աշխատում էր, որ իրեն դիմողներին կարողանա օգնել որևէ բանով: Ժշտապատ էր ու ազնիվ: Ժշտ է, նա շունչեցավ իր ընտանիքը, սակայն այնքան մեծ սիրտ ուներ, որ իրեն երջանիկ էր զգում նաև եղբոր ընտանիքի հետ, որիցները երջանկությամբ: Զարադետ երկրաշար-



ժի օրը Կիման աշխատակալում էր, որտեղ և կնքեց մահ կանգուն:

ՈՒՂՅՈՒՄ
Կարինե Համարձումի Արամյանի ծննդյան թիվը ներկայացնողի պատճառով «Հի

շողության» № 21-ում տպագրվել է 1981: Պետք կարդալ 1971:



Վշտի երկաթյա վկաներ...

Լուսանկարը՝ Ս. Գուլյանի

(Սկզբը՝ 6-րդ էջում)

Փլատակներում,
Եվ ուրախության
Արցունքն աչքերիդ
Հաշում էր զի:
Շուն հավատարիմ
Քեզ մատաղ լինեմ,
Իսկ փրկարար ձեռք,
Իսկ ամենագոր,
Ամենամալուր էակն աշխարհի:

Օ ր ո ղ ո ն մ ա ն

Խեղճում է ինձ տոբր ծմեպան,
Արցունք սառել է աչքերիս,
Այրվել են երազները վաղվա,
Իսկ ազդե շերտ է մայրերին:

Իսկ ազդե շերտ է մայրերին,
Մեծացա, ծերացա մեկ օրում,
Ցամախա աչքեր մայրերի
Իմ անբաղ օրերն են օրարում:

Իմ անբաղ օրերն են օրարում
Սգավոր ֆայտեով Գյումրիվա,
Մալ իմ, ես էեզ եմ արճում,
Թեև հատած բոչուն եմ էեզ նման:

Թեև հատած բոչուն եմ էեզ նման,
Թե չունեմ, բոչում եմ զեպի վեր,
Քո նախրին ես պիտի միանամ,
Երկուսս էլ կունենանք զայդ բեր:

Խեղճում է ինձ տոբր ծմեպան,
Հաշվում է արցունքն աչքերիս,
Մաղկում են երազները վաղվա,
Ավերակ-արևատ մայրերին:

Օ ր ք ա ո ա ս ու լ ն ք ի

Սր Լառասունքի,
Քառասուն անգամ իջնում եմ ձեկի,
«Ողորմ մեռելոց»
Հայոց աշխարհը պատվել է կրկին,
Իսկ մահով խնկի:

Ողբում մեռելոց,
Գերեզմանոցում հոռի բազմություն է,
Աստված, տեղ չկա, որ դու սաղ դնես,
Սառ շիրիմներ չե, չկան այստեղ,
Բոլորն էլ մեկն են,
Բոլորն էլ մեռն են,
Բոլորն էլ իմն են:
Ես մահից առաջ
Մահը տեսածս
Որ մի շիրիմին մտնեմ, ողբում,
Որ մի շիրիմին արտասուխ տամ,
Ինձ պիտի ողբամ:
Իմ սիրտը մեծ է,
Ամենամեծը,
Իմ ազգը մեծ է՝
Ամենամեծը,
Իմ ցավը մեծ է՝
Տիեզերից էլ մեծ,
Մեծ ազգն է միայն մեծ ցավը տառում,
Լուսն ես, աստված,
Տեսնում ես, աստված,
Աչքերդ լայն բաց, նայի՛ր,
Իմ մանուկների
Քար-օրոցներին
Ոչ բե կար է, այլ
Սղի է դրված—
Ողբում էեզ աստված:
Սր Լառասունքի...

Քառասուն անգամ իջնում եմ ձեկի,
«Ողորմ» ասում իմ անմեղներին,
Ազգայնիներին:
Ասում եմ, որ կան,
Որ կան, հավերժ են...
Մեր սիրտը մեկն է,
Մեր սիրտը մեծ է,
Որ բե ինչպես էլ մեծ սիրտը հայի
Նուր պես եմ տա,
Այդ ես ամեն տեղից
Ես արմատ կտա:

Օ ր ծ ն ն գ ի

Չեյ, էնեյ, հեյ, հիշ մանուկի,
Չեյ ժողովուրդ աչքես լույս,
Իջի՛ր ձեկի, հիշ մանուկի,
Ինչ մեր ցավը այսուհետև
Այսպես լինի՝ միշտ ԵՐԿՈՒՆՔԻ:



ՀԱՌՈՒՏ ԱՐԶԵՍՏԱՎՈՐՆ
ՈՒ ԻՍԿԱԿԱՆ ՄԱՐԴԷ

ՀԱՄԻԿ ԼԵՎՈՆԻ ԱՄՐՈՅԱ
ՆԸ ծնվել է 1950 թվականին,
Միջնակարգ կրթությունն ըս
տացել է N 3 դպրոցում:
Զինվորական ծառայությունն
անցկացրել է Գերմանիա-
յում:

1974-ին, ծառայությունից
վերադառնալով, ընդունվեց
Երևանի ֆիզիկական դաս-
տիարակության ինստիտու-
տը: Այն ավարտելուց հետո
Համիկը մարզիչ էր աշխա-
տում: Սիրում էր բռնցքա-
մարտը, համարելով այն իս
կական տղամարդուն վայել
մարզաձև: Ամեն կերպ սեր
էր սերմանում իր սաների
մեջ այդ մարզաձևի նկատ-
մամբ:
Գեղեցիկը արարելու մեծ
ցանկությունը ստիպում էր,

որ Համիկը մարզիչի պար-
տականությունները կատար-
ելու հետ մեկտեղ կատարի
նաև ներկարարի աշխատան-
քը: Մակայն նա սուսկ ներ-
կարար չէր, այլ նորարար
այդ գործում: Գեղադիտա-
կան մեծ հանույր էին պատ
ճառում նրա ներկարարա-
կան աշխատանքները: Բազ
մաթիվ օրախոսք զովասանե-
րով ու հիացումով են ընդունել
զրանք նաև Համիկին
իրեն անձնագործություն:

Բարի էր ու մարդկային
իր գործի գիտակ Համիկ
Ամրոյանը, օժտված մարզ-
կային ամենալավ հատկա-
նիշներով, Անասիան հա-
մեստ էր իր կատարածի, ար-
ված գովեստի հանդեպ: Ա-
մենակարևորն համարում էր
սերը գործի նկատմամբ և
ամեն ինչ կատարում էր
անմեծացորդ նվիրումով:

Ազնաի օրը, սուղբականի
պես, հերթական գեղեցիկ
գործը կատարելու էր մեկ-
նում: Ծանապարհին հանդի-
պում է իր ծանոթներին
մեկին, որի խրնդ-
րանքով գնում են նորոգ-
ման աշխատանք կատար-
ելու: Միշտ պատրաստա-
կամ Համիկը այս անգամ էլ
չմերժեց և... Իսահակյան
փողոցի շենքերից մեկում
կեքեց իր մահկանացուն:
Ընդմիջող դադարեց բարա-
խելուց 3 երեխաների հոր,
հմուտ արհեստագործի և իս-
կական մարզու սիրտը: